



Կ-238-17.01.2018,07.02.2018-ՊԻՄԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

**Ն Ե Ր Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն**

**Գ Լ ՈՒ Ն 1.  
Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Դ Ր ՈՒ Յ Թ Ն Ե Ր**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է ներման, ներման խնդրագրերի ներկայացման և քննարկման, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Ներման մասին օրենսդրությունը**

1. Ներման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով և սույն օրենքով:

**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ներում`** մարդասիրական դրսևորում, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով.

2) **ներման խնդրագիր`** գրավոր դիմում, որը հանցագործության համար դատապարտված անձը ներկայացնում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն` Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից ներում շնորհելու նպատակով:



## ԳԼՈՒԽ 2.

### ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

#### Հոդված 4. Ներման խնդրագրերի ներկայացման կարգը

1. Ներման խնդրագիր ներկայացնելու իրավունք ունի հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձ միայն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

2. Այլ անձինք կարող են ներկայացնել ներման միջնորդություններ: Ներման միջնորդություններ ներկայացնելու դեպքում դրանք կցվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի կողմից ներկայացված ներման խնդրագրին: Ներման միջնորդությունները չեն քննարկվում, եթե առկա չէ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի ներման խնդրագիրը: Ներման միջնորդությունները չքննարկելու դեպքում դրանք վերադարձվում են:

3. Ներման խնդրագիրը պարունակում է՝

- 1) այն ներկայացնող անձի անունը, ազգանունը.
- 2) ծանուցման վայրի մասին նշում.
- 3) գործի հակիրճ նկարագրությունը.
- 4) ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը.
- 5) դատապարտյալի վերաբերմունքը իր կատարած հանցանքի նկատմամբ.
- 6) ներման խնդրագիրը հիմնավորող հանգամանքները.
- 7) ներման խնդրագիրը ներկայացնող անձի կարծիքով ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

4. Ներման միջնորդությունների առկայության դեպքում ներման խնդրագիր ներկայացնող անձը դրանք կարող է կցել ներման խնդրագրին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ներման խնդրագրին ներկայացվող պահանջները չպահպանելն արգելք չէ ներման խնդրագրի քննարկման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ներման խնդրագրով հնարավոր չէ նույնականացնել այն ներկայացնող անձին:

6. Ներման խնդրագրերը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում կամ պատիժը կատարող մարմնի միջոցով ուղարկվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

7. Ներման խնդրագրերը պատիժը կատարող մարմնի միջոցով ուղարկվելու դեպքում պատիժը կատարող մարմնի վարչակազմը ներման խնդրագրերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է նախարարություն:

8. Ներման միջնորդությունները սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում են նախարարություն: Ներման միջնորդությունները Հայաստանի Հանրապետության վարչապետին (այսուհետ՝ Վարչապետ) կամ Հայաստանի Հանրապետության նախագահին (այսուհետ՝ Հանրապետության նախագահ) ներկայացնելու դեպքում դրանք ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են նախարարություն, եթե ներման խնդրագիրը համապատասխանաբար Վարչապետի կամ Հանրապետության նախագահի մոտ չի գտնվում:



### **Հոդված 5. Ներման խնդրագրերի քննարկման կարգը**

1. Ներման խնդրագրի քննարկման նպատակով նախարարությունը ներման խնդրագրի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ կազմում է անձնական գործ և ներկայացնում Վարչապետին:

2. Ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ անձնական գործը (այսուհետ՝ անձնական գործ) կազմվում է Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության կամ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն ներկայացրած տվյալների հիման վրա: Սույն մասով նախատեսված մարմինները պարտավոր են նախարարության հարցման ստացման օրվանից հնգօրյա ժամկետում պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել նախարարություն:

3. Անձնական գործը պետք է պարունակի հանցագործության համար դատապարտված անձի ներկայացրած ներման խնդրագիրը, ներման միջնորդությունները (առկայության դեպքում), նրա վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը, պատիժը կրելու ընթացքում նրա դրսևորած վարքագծի բնութագիրը, սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ ներման խնդրագրերի քննարկման ժամանակ ուսումնասիրվող հանգամանքների մասին ամփոփ տեղեկանքը:

4. Անձնական գործն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Վարչապետն այն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

5. Հաշվի առնելով ներման խնդրագրի բնույթը և կարևորությունը՝ բացառիկ դեպքերում Վարչապետը ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին կարող է ներկայացնել առանց հարցը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու:

6. Հանձնաժողովը ներման խնդրագիրը ստանալուց հետո քսանօրյա ժամկետում Վարչապետին ներկայացնում է եզրակացություն ներման խնդրագրի վերաբերյալ: Հանձնաժողովի՝ ներման խնդրագրի վերաբերյալ ներկայացված եզրակացությունը խորհրդատվական բնույթ ունի:

7. Վարչապետը Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ անձնական գործն ստանալուց հետո ոչ ուշ, քան տասնհինգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին ներկայացնում է ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը և Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում):

8. Հանրապետության նախագահի քննարկմանը ներկայացվող անհրաժեշտ նյութերը նախապատրաստում, ինչպես նաև Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է նախարարությունը:

9. Ներման խնդրագրերի քննարկմանն առնչվող նյութերի արխիվացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:



**Հոդված 6. Ներման խնդրագրերի քննարկման ժամանակ ուսումնասիրվող հանգամանքները**

1. Ներման խնդրագրերը քննարկելիս ուսումնասիրվում են հետևյալ հանգամանքները՝
  - 1) ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը.
  - 2) կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը.
  - 3) դատապարտյալի անձը.
  - 4) իր կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը.
  - 5) դատապարտյալի վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ.
  - 6) պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը.
  - 7) ռեցիդիվի առկայությունը.
  - 8) տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը.
  - 9) մասնակցությունը վերասոցիալականացման միջոցառումներին և ծրագրերին.
  - 10) առողջական վիճակը.
  - 11) սոցիալական դրությունը.
  - 12) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.
  - 13) նախկինում ներում չնորհված լինելու կամ համաներում կիրառված լինելու, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված լինելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինված լինելու հանգամանքը.
  - 14) ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Հոդված 7. Ներում շնորհելու դեպքերը**

1. Հանցագործության համար դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա ներկայացրել է ներման խնդրագիր:
  2. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը կամ ազատազրկման ոչ պակաս, քան կեսը:
  3. Ցմահ ազատազրկման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին:
  4. Ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:

**Հոդված 8. Ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը**

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում Հանրապետության նախագահը ստորագրում է ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը (սույն հոդվածում այսուհետ՝ հրամանագրի նախագիծ) կամ իր առարկություններով այն վերադարձնում Վարչապետին:



2. Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը և հրամանագրի նախագիծը կրկին ներկայացնում Հանրապետության նախագահին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է հրամանագիրը կամ դիմում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

3. Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետն ընդունում է Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Վարչապետը Հանրապետության նախագահի առարկության ստացման պահից հնգօրյա ժամկետում առարկությանը համապատասխան խմբագրում է հրամանագրի նախագիծը և այն ներկայացնում Հանրապետության նախագահին:

4. Եթե Հանրապետության նախագահը սույն օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առաջարկությունը եռօրյա ժամկետում չի վերադարձնում իր առարկություններով, կամ Վարչապետի կողմից Հանրապետության նախագահի առարկությունները չընդունվելու դեպքում չի դիմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, ապա հրամանագրի նախագիծն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վարչապետը կազմում է հրամանագրի նախագծի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին ծանուցում և ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում ներման խնդրագիր ներկայացրած անձին, նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն:

6. Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ընդունվելուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին, նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն:

7. Ներման ակտով անձը չի կարող ազատվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական և ոչ նյութական վնասը հատուցելու պարտականությունից:

#### **Հոդված 9. Ներման խնդրագրերը մերժելու դեպքում ներման նոր խնդրագրեր ներկայացնելը**

1. Ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, ներման նոր խնդրագրերը Հանրապետության նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել ներման նախորդ խնդրագրերի մերժման օրվանից 1 տարի հետո:

2. Մինչև սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի ավարտն ստացված ներման նոր խնդրագրերը վերադարձվում են և ենթակա չեն քննարկման:



**ԳԼՈՒԽ 3.**

**ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒԹՎ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄԸ**

**Հոդված 10. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի նախագծերի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին ծանուցումների (այսուհետ՝ ծանուցումներ) կատարումը**

1. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը և ծանուցումները կատարման նպատակով սույն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգով ուղարկվում են՝

1) տուգանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կամ հանրային աշխատանքների կամ հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու կամ գույքի բռնագրավման կամ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերաբերյալ՝ նախարարություն.

2) զինվորական ծառայության մեջ սահմանափակման կամ կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողների վերաբերյալ՝ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն:

2. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը և ծանուցումներն ի կատար են ածվում անհապաղ՝ հրամանագրերի քաղվածքները կամ ծանուցումներն ստանալուն պես: Սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմինները հրամանագրերի կամ ծանուցումների կատարման մասին հաղորդագրություններն անհապաղ ուղարկում են Ոստիկանություն:

3. Ներում շնորհված դատապարտյալների նկատմամբ կայացված դատավճիռները նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում դատարաններն իրենց կայացրած՝ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին դատական ակտերի մասին տեղեկացնում են Հանրապետության նախագահի աշխատակազմին:

4. Դատապարտյալի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում ներման խնդրագրի քննարկումը կատարվում է մինչև վերանայման վարույթի արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

**Հոդված 11. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ծանուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը**



1. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ծանուցումների կատարումը սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում վերահսկում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը:

#### ԳԼՈՒԽ 4.

##### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

#### Հոդված 12. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը

1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

2. Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է Վարչապետը:

#### ԳԼՈՒԽ 5.

##### ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 13. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

#### Հոդված 14. Օրենքի գործողությունը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ներման խնդրագրերի և այն խնդրագրերի վրա, որոնք Հանրապետության նախագահի աշխատակազմ են ներկայացվել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն դեռևս չեն քննարկվել:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանրապետության նախագահի աշխատակազմը Հանրապետության նախագահի աշխատակազմ ներկայացված, սակայն դեռևս չքննարկված ներման խնդրագրերն ուղարկում է նախարարություն:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վաթսուներորդա ժամկետում Վարչապետը հաստատում է Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կ-238-17.01.2018,07.02.2018-ՊԻՄԻ-011/1 ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-238-17.01.2018,07.02.2018-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը

ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է ներման, ներման խնդրագրերի ներկայացման և քննարկման, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Ներման մասին օրենսդրությունը**

1. Ներման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով և սույն օրենքով:

**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ներում**՝ մարդասիրական դրսևորում, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով:

~~ներման շնորհում՝ խրախուսական գործընթաց, որի միջոցով հանցագործության համար դատապարտված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով:~~

2) **ներման խնդրագիր**՝ գրավոր դիմում, որը հանցագործության համար դատապարտված անձը ներկայացնում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից ներում շնորհելու նպատակով:

Գ Լ ՈՒ Խ 2.

ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

**Հոդված 4. Ներման խնդրագրերի ներկայացման կարգը**

1. Ներման խնդրագիր ներկայացնելու իրավունք ունի հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձ միայն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

2. Այլ անձինք կարող են ներկայացնել ներման միջնորդություններ: Ներման միջնորդություններ ներկայացնելու դեպքում դրանք կցվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի կողմից ներկայացված ներման խնդրագրին: Ներման միջնորդությունները չեն քննարկվում, եթե առկա չէ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի ներման խնդրագիրը: **Ներման միջնորդությունները չքննարկվելու դեպքում դրանք վերադարձվում են:**





3. Ներման խնդրագիրը պետք է պարունակի պարունակում է՝

- 1) այն ներկայացնող անձի անունը, ազգանունը.
- 2) ծանուցման վայրի մասին նշում.
- 3) գործի հակիրճ նկարագրությունը.
- 4) ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը հայցվող ներման խնդրանքի էությունը.
- 5) դատապարտյալի վերաբերմունքը իր կատարած հանցանքի նկատմամբ.
- 6) ներման խնդրագիրը հիմնավորող հանգամանքները.
- 7) ներման խնդրագիրը ներկայացնող անձի կարծիքով ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

4. Ներման միջնորդությունների առկայության դեպքում ներման խնդրագիր ներկայացնող անձը դրանք կարող է կցել ներման խնդրագրին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ներման խնդրագրին ներկայացվող պահանջները չպահպանելն արգելք չէ ներման խնդրագրի քննարկման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ներման խնդրագրով հնարավոր չէ նույնականացնել այն ներկայացնող անձին:

56. Ներման խնդրագրերը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում կամ պատիժը կատարող մարմնի միջոցով ուղարկվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն (այսուհետ՝ Արդարադատության նախարարություն):

67. Ներման խնդրագրերը պատիժը կատարող մարմնի միջոցով ուղարկվելու դեպքում պատիժը կատարող մարմնի վարչակազմը ներման խնդրագրերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է Արդարադատության նախարարություն:

78. Ներման միջնորդությունները սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում են նախարարություն: Ներման միջնորդությունները Հայաստանի Հանրապետության վարչապետին (այսուհետ՝ Վարչապետ) կամ Հայաստանի Հանրապետության նախագահին (այսուհետ՝ Հանրապետության նախագահ) ներկայացնելու դեպքում դրանք ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են նախարարություն, եթե ներման խնդրագիրը համապատասխանաբար Վարչապետի կամ Հանրապետության նախագահի մոտ չի գտնվում:

~~Ներման միջնորդությունները սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում են Արդարադատության նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության վարչապետին (այսուհետ՝ Վարչապետ): Ներման միջնորդությունները Վարչապետին ներկայացնելու դեպքում Վարչապետը ներման միջնորդություններն ստանալուց պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է Արդարադատության նախարարություն:~~

### Հոդված 5. Ներման խնդրագրերի քննարկման կարգը

1. Ներման խնդրագրի քննարկման նպատակով Արդարադատության նախարարությունը ներման խնդրագրի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ կազմում է անձնական գործ և ներկայացնում Վարչապետին:

2. Ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ անձնական գործը (այսուհետ՝ անձնական գործ) կազմվում է Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, պրոբացիայի պետական ծառայության քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության կամ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պաշտպանության նախարարություն) ներկայացրած տվյալների հիման վրա: Սույն մասով նախատեսված մարմինները պարտավոր են Արդարադատության նախարարության հարցման ստացման օրվանից հնգօրյա ժամկետում պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել Արդարադատության նախարարություն:

3. Անձնական գործը պետք է պարունակի հանցագործության համար դատապարտված անձի ներկայացրած ներման խնդրագիրը, ներման միջնորդությունները (առկայության դեպքում), նրա վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը, պատիժը կրելու ընթացքում նրա դրսևորած վարքագծի բնութագիրը, սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ ներման խնդրագրերի քննարկման ժամանակ ուսումնասիրվող հանգամանքների մասին ամփոփ տեղեկանքը:

4. Անձնական գործն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Վարչապետն այն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:



5. Հաշվի առնելով ներման խնդրագրի բնույթը և կարևորությունը՝ բացառիկ դեպքերում Վարչապետը ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին կարող է ներկայացնել առանց հարցը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու:

6. Հանձնաժողովը ներման խնդրագիրը ստանալուց հետո քսանօրյա ժամկետում Վարչապետին ներկայացնում է եզրակացություն ներման խնդրագրի վերաբերյալ: Հանձնաժողովի ներման խնդրագրի վերաբերյալ ներկայացված եզրակացությունը խորհրդատվական բնույթ ունի:

7. Վարչապետը Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում անձնական գործն ստանալուց հետո ոչ ուշ, քան տասնհինգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին ներկայացնում է ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը և Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում):

8. Հանրապետության նախագահի քննարկմանը ներկայացվող անհրաժեշտ նյութերը նախապատրաստում, ինչպես նաև Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարությունը:

9. Ներման խնդրագրերի քննարկմանն առնչվող նյութերի արխիվացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~9. Հանձնաժողովը ստեղծվում և Հանձնաժողովի աշխատակարգը հաստատվում է Վարչապետի որոշմամբ:~~

#### Հոդված 6. Ներման խնդրագրերի քննարկման ժամանակ ուսումնասիրվող հանգամանքները

1. Ներման խնդրագրերը քննարկելիս ուսումնասիրվում են հետևյալ հանգամանքները՝

1) ~~ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը հայցվող ներման խնդրանքի էությունը.~~

2) կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը.

3) դատապարտյալի անձը.

4) իր կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը.

5) դատապարտյալի վերաբերմունքը քրեական ենթանշակույթի նկատմամբ.

6) պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը.

7) ռեցիդիվի առկայությունը.

8) տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը.

9) մասնակցությունը վերասոցիալականացման միջոցառումներին և ծրագրերին.

~~10~~9) առողջական վիճակը.

~~10~~11) սոցիալական դրությունը.

~~11~~12) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.

~~12~~13) նախկինում ներում շնորհված լինելու կամ համաներում կիրառված լինելու, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված լինելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինված լինելու հանգամանքը.

~~13~~14) ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

#### Հոդված 7. Ներում շնորհելու դեպքերը

1. Հանցագործության համար դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա ներկայացրել է ներման խնդրագիր:

2. Որոշակի ժամկետով ազատագրվման դատապարտված և ազատագրվման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի օրենքով սահմանված մասը կամ ազատագրվման ոչ պակաս, քան կեսը:

3. Ցմահ ազատագրվման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատագրվման ոչ պակաս, քան քսան տարին:

4. Ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:

#### Հոդված 78. Ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում Հանրապետության նախագահը ստորագրում է ներում շնորհելու կամ ներման



շնորհունը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը (սույն հոդվածում այսուհետ՝ հրամանագրի նախագիծ) կամ իր առարկություններով այն վերադարձնում Վարչապետին:

2. Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը և հրամանագրի նախագիծը կրկին ներկայացնում Հանրապետության նախագահին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ~~հրապարակում~~ **ընդունում է** հրամանագիրը կամ դիմում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

3. Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետն ընդունում է Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Վարչապետը Հանրապետության նախագահի առարկության ստացման պահից հնգօրյա ժամկետում առարկությանը համապատասխան խմբագրում է հրամանագրի նախագիծը և այն ներկայացնում Հանրապետության նախագահին:

4. Եթե Հանրապետության նախագահը սույն օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առաջարկությունը եռօրյա ժամկետում չի վերադարձնում իր առարկություններով, կամ Վարչապետի կողմից Հանրապետության նախագահի առարկությունները չընդունվելու դեպքում չի դիմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, ապա ~~Հանրապետության նախագահի հրամանագիրը~~ **հրամանագրի նախագիծն** ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վարչապետը կազմում է ~~Հանրապետության նախագահի հրամանագրի հրամանագրի նախագիծ~~ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին ծանուցում և ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում ներման խնդրագիր ներկայացրած անձին, ~~Վրդարադատության~~ **նախարարություն**, իսկ սույն օրենքի 910-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև **պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Պաշտպանության** ~~նախարարություն~~:

6. Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ~~հրապարակվելուց~~ **ընդունվելուց** հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին, ~~Վրդարադատության~~ **նախարարություն**, իսկ սույն օրենքի 910-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև **պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Պաշտպանության** ~~նախարարություն~~:

7. Ներման ակտով անձը չի կարող ազատվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական և ոչ նյութական վնասը հատուցելու պարտականությունից:

**Հոդված 89. Ներման խնդրագրերը մերժելու դեպքում ներման նոր խնդրագրեր ներկայացնելը**

1. Ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, ներման նոր խնդրագրերը Հանրապետության նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել ներման նախորդ խնդրագրերի մերժման օրվանից 1 տարի հետո:

2. Մինչև սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի ավարտն ստացված ներման նոր խնդրագրերը ~~կցվում են ներման խնդրագիրը ներկայացրած անձի վերաբերյալ առկա նյութերին~~ **վերադարձվում են** և ենթակա չեն քննարկման:

**ԳԼՈՒԽ 3.**

**ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ՝ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՈՒՇՈՎ ՈՒՇԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՐ ՎԵՐԱՀՆՎՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄԸ**

**Հոդված 910.** Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի **նախագծերի՝** իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին ծանուցումների (այսուհետ՝ ծանուցումներ) կատարումը

1. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը և ծանուցումները կատարման նպատակով սույն օրենքի 78-րդ հոդվածի 5-րդ և 76-րդ մասերով սահմանված կարգով ուղարկվում են՝

1) տուգանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կամ հանրային աշխատանքների կամ հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու կամ գույքի բռնագրավման կամ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերաբերյալ՝ ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ **նախարարություն**:



2) զինվորական ծառայության մեջ սահմանափակման կամ կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողների վերաբերյալ՝ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ~~Հայաստանի—Հանրապետության պաշտպանության~~ նախարարություն:

2. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը և ծանուցումներն ի կատար են ածվում անհապաղ՝ հրամանագրերի քաղվածքները կամ ծանուցումներն ստանալուն պես: Սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմինները հրամանագրերի կամ ծանուցումների կատարման մասին հաղորդագրություններն անհապաղ ուղարկում են Ոստիկանություն~~Հայաստանի—Հանրապետության կառավարությանն առընթեր~~ ~~Հայաստանի—Հանրապետության ոստիկանություն:~~

3. Ներում շնորհված դատապարտյալների նկատմամբ կայացված դատավճիռները նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու դեպքում՝ դատարաններն իրենց կայացրած դատական ակտերի մասին տեղեկացնում են Հանրապետության նախագահի աշխատակազմին:

4. Դատապարտյալի նկատմամբ կայացված եւ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու դեպքում՝ ներման խնդրագրի քննարկումը կասեցվում է մինչեւ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթի արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ներում շնորհված դատապարտյալների նկատմամբ կայացված դատավճիռները նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում՝ դատարաններն իրենց կայացրած՝ հանգանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին դատական ակտերի մասին տեղեկացնում են Հանրապետության նախագահի աշխատակազմին:

4. Դատապարտյալի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում՝ ներման խնդրագրի քննարկումը կասեցվում է մինչև վերանայման վարույթի արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

**Հոդված 4011.** Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ծանուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը

1. Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերի և ծանուցումների կատարումը սույն օրենքի 910-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում վերահսկում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ~~Հայաստանի—Հանրապետության արդարադատության~~ նախարարը, իսկ սույն օրենքի 910-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ~~Հայաստանի—Հանրապետության պաշտպանության~~ նախարարը:

**ԳԼՈՒԽ 4.  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ**

**Հոդված 12. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը**

1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

2. Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է Վարչապետը:

**ԳԼՈՒԽ 45.  
ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 4413.** Օրենքի ուժի մեջ մտնելը



1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**Հոդված 42<sup>14</sup>. Օրենքի գործողությունը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ներման խնդրագրերի և այն խնդրագրերի վրա, որոնք Հանրապետության նախագահի աշխատակազմ են ներկայացվել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն դեռևս չեն քննարկվել:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանրապետության նախագահի աշխատակազմը Հանրապետության նախագահի աշխատակազմ ներկայացված, սակայն դեռևս քննարկված ներման խնդրագրերն ուղարկում է նախարարություն:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վաթսուներորդա ժամկետում Վարչապետը հաստատում է Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ներման մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-238-17.01.2018.07.02.2018-ՊԻՄԻ)  
 Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	<p>«Հառավարություն</p>	<p>«Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝</p> <p>1. 3-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետ</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետում մեկնաբանվող «ներման շնորհում» հասկացությունը փոխարինել «ներում» հասկացությամբ և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) <b>ներում</b>՝ մարդասիրական դրսևորում, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով.»: </p> <p>2. 4-րդ հոդվածի, 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր</p>	<p>1. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի նշված կետը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ:</p>	<p>1. Ընդունվել է</p>

		<p>2. 4-րդ հոդվածի, 2-րդ մաս</p> <p>3. 4-րդ հոդված</p> <p>4. 4-րդ հոդվածի 7-րդ մաս</p>	<p>նախադասությամբ. «Ներման միջնորդությունները չքննարկելու դեպքում դրանք վերադարձվում են:»:</p> <p>3. 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով. «4. Ներման միջնորդությունների առկայության դեպքում ներման խնդրագիր ներկայացնող անձը դրանք կարող է կցել ներման խնդրագրին:»:</p> <p>4. 4-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսել դրույթ առ այն, որ ներման միջնորդությունը կարող է անմիջապես ներկայացվել նաև Հայաստանի Հանրապետության նախագահին: Ելնելով վերոգրյալից 4-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Ներման միջնորդությունները սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում են նախարարություն, Հայաստանի Հանրապետության վարչապետին (այսուհետ՝ Վարչապետ) կամ Հայաստանի Հանրապետության նախագահին (այսուհետ՝ Հանրապետության նախագահ): Ներման միջնորդությունները Վարչապետին կամ Հանրապետության նախագահին ներկայացնելու դեպքում դրանք ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են նախարարություն, եթե ներման խնդրագիրը համապատասխանաբար Վարչապետի կամ Հանրապետության նախագահի մոտ չի գտնվում:»</p>	<p>2. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>3. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>4. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>
--	--	--	---	--	---

		<p>5. 5-րդ հոդվածի 2-րդ մաս</p> <p>6. 5-րդ հոդվածի 9-րդ մաս</p>	<p>5. 5-րդ հոդվածի 2-րդ մասում «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, պրոբացիայի պետական ծառայության» բառերը փոխարինել «Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության» բառերով՝ ելնելով «Պետական կառավարման մարմինների համակարգի մասին» ՀՀ օրենքով ամրագրված անվանումներին:</p> <p>6. Նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ մասը հանել և Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ, նոր 4-րդ գլխով.  <b>« ԳԼՈՒԽ 4.  ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ</b></p> <p><b>Հոդված 12. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը</b></p> <p>1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:</p> <p>2. Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է Վարչապետը:»:</p> <p>7. Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մասով.  «9. Ներման խնդրագրերի քննարկմանն առնչվող նյութերի արխիվացման</p>	<p>5. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>6. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>5. Ընդունվել է</p> <p>6. Ընդունվել է</p>
--	--	---	--	---	---



		<p>7. 5-րդ հոդված</p> <p>8. 6-րդ հոդվածի 1-ին մաս</p>	<p>հաստատում է Վարչապետը:»:</p> <p>7. Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մասով.  «9. Ներման խնդրագրերի քննարկմանն առնչվող նյութերի արխիվացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»</p> <p>8. Նախագծի 6-րդ հոդվածի՝</p> <p>ա. 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը»՝ նույն խմբագրությունը նախատեսելով նաև Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում:</p> <p>բ. 1-ին մասի 4-րդ կետը «ունեցած» բառից առաջ լրացնել «դատապարտյալի» բառով</p> <p>գ. 1-ին մասի 5-րդ կետում «իր» բառը փոխարինել «դատապարտյալի» բառով:</p> <p>դ. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.  «8) տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը.»:</p> <p>9. Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «Հանրապետության նախագահի հրամանագիրը» բառերը</p>	<p>7. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>8. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>7. Ընդունվել է</p> <p>8. Ընդունվել է</p>
--	--	--	---	--	--

			<p>հաստատում է Վարչապետը:»:</p> <p>7. Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մասով. «9. Ներման խնդրագրերի քննարկմանն առնչվող նյութերի արխիվացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»</p> <p>8. Նախագծի 6-րդ հոդվածի՝ ա. 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը»՝ նույն խմբագրությունը նախատեսելով նաև Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում: բ. 1-ին մասի 4-րդ կետը «ունեցած» բառից առաջ լրացնել «դատապարտյալի» բառով գ. 1-ին մասի 5-րդ կետում «իր» բառը փոխարինել «դատապարտյալի» բառով: դ. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով. «8) տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը.»:</p> <p>9. Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «Հանրապետության նախագահի հրամանագիրը» բառերը</p>		
		9. 7-րդ հոդվածի 4-րդ մաս		9. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.	9. Ընդունվել է
		10. 8-րդ հոդվածի 2-րդ մաս		10. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.	10. Ընդունվել է
		11. 9-րդ հոդված 1-ին մաս		11. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.	11. Ընդունվել է

		<p>12. 9-րդ հոդվածի 2-րդ մաս</p> <p>13. 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր</p>	<p>փոխարինել «հրամանագրի նախագծի» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում դեռևս առկա չէ Հանրապետության նախագահի հրամանագիր:</p> <p>10. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «կցվում են ներման խնդրագիրը ներկայացրած անձի վերաբերյալ առկա նյութերին» բառերը փոխարինել «վերադարձվում են» բառերով:</p> <p>11. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «5-րդ և 7-րդ» բառերը փոխարինել «5-րդ և 6-րդ» բառերով, իսկ «7-րդ» բառը՝ «8-րդ» բառով:</p> <p>12. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերը փոխարինել «Ոստիկանություն» բառով:</p> <p>13. Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում բացի նոր և նոր երևան եկած հանգամանքներով գործի վերանայման դեպքերից, լրացնել նաև գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով գործի վերանայման դեպքերը: Միաժամանակ, հստակ նշել, որ ներում շնորհված դատապարտյալների</p>	<p>12. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>13. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>12. Ընդունվել է</p> <p>13. Ընդունվել է</p>
--	--	--	--	---	---

		<p>14. 12-րդ հոդված</p>	<p>նկատմամբ կայացված դատավճիռները վերանայելու դեպքում դատարանները տեղեկացնում են ՀՀ նախագահի աշխատակազմին միայն իրենց կայացրած՝ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին դատական ակտերի մասին: Ելնելով վերոգրյալից 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«3. Ներում շնորհված դատապարտյալների նկատմամբ կայացված դատավճիռները նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում դատարաններն իրենց կայացրած՝ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին դատական ակտերի մասին տեղեկացնում են Հանրապետության նախագահի աշխատակազմին:</p> <p>4. Դատապարտյալի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի նախորդ քննության ժամանակ թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման հիմքով վերանայելու դեպքում ներման խնդրագրի քննարկումը կասեցվում է մինչև վերանայման վարույթի արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:»:</p> <p>14. Նախագծի 12-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-</p>	<p>14. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>14. Ընդունվել է</p>
--	--	-------------------------	---	---	------------------------

		<p>15. Նախագծի 4-րդ գլուխ</p> <p>16. Նախագիծ</p>	<p>րդ մասերով.  «2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանրապետության նախագահի աշխատակազմը Հանրապետության նախագահի աշխատակազմ ներկայացված, սակայն դեռևս չքննարկված ներման խնդրագրերն ուղարկում է նախարարություն:  3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Վարչապետը հաստատում է Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:»:</p> <p>15. Նախագծի 4-րդ գլխի վերնագրում «Եզրափակիչ» բառից հետո լրացնել «մաս» բառը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:</p> <p>16. Առաջարկվում է Նախագծում, ՀՀ Սահմանադրության 135-րդ հոդվածին համահունչ, նախատեսել ներում շնորհելու դեպքերը: Ելնելով վերոգրյալից Նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ հոդվածով.  «<b>Հոդված 7. Ներում շնորհելու դեպքերը</b>  1. Հանցագործության համար դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա ներկայացրել է ներման խնդրագիր:  2. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ</p>	<p>15. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p> <p>16. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>15. Ընդունվել է</p> <p>16. Ընդունվել է</p>
--	--	--	--	---	---

		<p>17. Նախագիծ</p>	<p>ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը կամ ազատագրկման ոչ պակաս, քան կեսը:</p> <p>3. Ցմահ ազատագրկման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատագրկման ոչ պակաս, քան քսան տարին:</p> <p>4. Ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:»:</p> <p>Ըստ այդմ՝ Նախագծի նշված հոդվածին հաջորդող հոդվածները վերահամարակալվել են:</p> <p>17. Նախագծում «ՀՀ արդարադատության նախարարություն» և «ՀՀ պաշտպանության նախարարություն» բառերը փոխարինել համապատասխանաբար «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն» և «պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն» բառերով: Ըստ այդմ՝ խմբագրել նաև Նախագծի 10-րդ հոդվածը:</p>	<p>17. Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.</p>	<p>17. Ընդունվել է</p>
--	--	--------------------	--	---	------------------------

2.	<b>Պատգամավոր էդմոն Մարուքյան</b>	Նախագիծ	<p>Նախագծում բացակայում է դրույթն առ այն, որ ներման հրամանագիրը հրապարակային փաստաթուղթ է և որ այն հրապարակվում է օրինակ Հանրապետության Նախագահի պաշտոնական վեբ-կայքում: Կարծում եմ, որ ներման հրամանագիրը գաղտնի պահելն անթույլատրելի է, այսօր էլ փաստացի գործ ունենք նման իրողության հետ: Մյուս կողմից, Նախագահին կաշկանդելու վերաբերյալ հիմնավորումը կարծում եմ տեղին չէ, քանի որ Նախագահն այլևս վերընտրվելու խնդիր չունի և անկուսակցական է: Իմ խորին համոզմամբ՝ հասարակությունը պետք է տեղեկացված լինի, թե ում է ներում շնորհվում և ում՝ ոչ և ինչ հիմնավորումներով՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում բոլոր ինստիտուտները, այդ</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել. հաշվի առնելով ինչպես ներման ակտերի հրապարակման առնչությամբ միջազգային փորձում առկա կարգավորումները, որոնք միատեսակ չեն, այնպես էլ դատապարտյալների անձնական տվյալների պաշտպանության ապահովման հանգամանքը՝ Նախագծով որդեգրած մոտեցման համաձայն ներման մասին հրամանագրերը ենթակա չեն հրապարկման:</p> <p>Այդուհանդերձ, Նախագիծը նախատեսում է, որ Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրը հրապարակվելուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին, իսկ այն դեպքում,</p>	Չի ընդունվել

			<p>թվում նաև ներման գործընթացը ծայրահեղ քաղաքականացված են:</p> <p>Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են Նախագծում ներառել հետևյալ բովանդակությամբ առանձին հոդված.</p> <p><i>«Ներում շնորհելու մասին հրամանագրի հրապարակայնությունը Ներում շնորհելու մասին հրամանագիրն ընդունվելու պահից երեք օրացույցային օրվա ընթացքում հրապարակվում է Հանրապետության նախագահի պաշտոնական ինտերնետային կայքում՝ նման հրամանագրերի համար առանձնացված հատուկ բաժնում:»:</i></p>	<p>երբ հրամանագիրն ուժի մեջ է մտել՝ հրավունքի ուժով և կազմվել ծանուցում, վերջինս նույն ժամկետում Վարչապետի կողմից ներկայացվում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին:</p>	
3.	Պատգամավոր Ռուստամ Մախմուդյան	2-րդ հոդված	<p>Նախագծի 2-րդ հոդվածում ավելացնել <b>«և այլ հրավական ակտերով»</b> բառերը, քանի որ ներման շնորհման գործընթացը կազմակերպելը կարգավորվում է նաև այլ ենթաօրենսդրական ակտերով, մասնավորապես խոսքը վերաբերում է ՀՀ Արդարադատության նախարարության և վարչապետի լիազորությունների սահմանման համար անհրաժեշտ իրավական ակտերին:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն. Նախագծում հստակ սահմանվել են այն իրավական ակտերը, որոնցով կարգավորվում է ներման շնորհման գործընթացը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
		Նախագիծ	<p>Նախագծում օգտագործված «ներման շնորհում» բառերը փոխարինել «ներում» բառով, իսկ «գործընթաց» բառը՝ «միջոց» բառով, հաշվի առնելով, որ ներման շնորհումը իրենից ներկայացնում է ոչ թե գործընթաց, այլ ավարտված միջոց, որով անձը լրիվ կամ մասնակիորեն ազատվում է հետագա պատժի կրումից: Դրանով իսկ <b>խմբագրման</b></p>	<p>Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ներման շնորհում» հասկացությունը փոխարինվել է «ներում» հասկացությամբ և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «1) <b>ներում</b>՝ մարդասիրական դրսևորում, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը սույն</p>	<p>Ընդունվել է</p>



			ենթարկել օրենքում օգտագործվող հասկացություններից ներման շնորհում եզրույթը:	օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով.»::	
		4-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետում նշված <b>«Ներման խնդրագիրը պետք է պարունակի»</b> բառերը փոխարինել <b>«Ներման խնդրագիրը պարունակում է»</b> բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի նշված կետում «Ներման խնդրագիրը պետք է պարունակի» բառերը փոխարինվել են «Ներման խնդրագիրը պարունակում է» բառերով:	Ընդունվել է
		7-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծով հստակեցված չէ այն հանգամանքը, թե ինչ է տեղի ունենում երբ Վարչապետի կողմից ՀՀ նախագահի առաջարկությունը մերժվելուց հետո այն իրավունքի ուժով ներման շնորհումը համարվում է ընդունված: Ուստի, առաջարկվում է հստակ շարադրել, որ օրենքով նշված ժամկետը ընդունվելուց հետո Նախագահը անհապաղ ստորագրում է հրամանագիր, որը պետք է ուղարկվի կատարման:	Առաջարկությունը չի ընդունվել. Նախագծի 7-րդ հոդվածի (վերահամարակալվել է որպես 8-րդ հոդված) 5-րդ մասով հստակ կանոնակարգվում են այն գործողությունները, որոնք ենթակա են կատարման Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու դեպքում: Մասնավորապես՝ նախագծի նշված հոդվածի 5-րդ մասում սահմանվում է, որ քննարկվող դեպքում դեպքում Վարչապետը կազմում է Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի՝ իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու մասին <b>ծանուցում</b> և ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում ներման խնդրագիր ներկայացրած անձին, արդարադատության ոլորտում	Ընդունվել է մասնակի:

				<p>Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն: Ասվածից բխում է, որ տվյալ դեպքում Հանրապետության նախագահը հրամանագիր չի ստորագրում:</p>	
		<p>7-րդ հոդվածի 5-րդ մաս 5 և 9-րդ հոդված</p>	<p>Առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի և 9-րդ հոդվածի պահանջները միասնականացնել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ միևնույն է իրավունքի ուժով Նախագահի հրամանագրի ոչ միայն գոյության կամ ընդունման, այլ նաև կատարման նպատակով պետք է պարտադիր այն ուղարկվի օրենքով նախատեսված իրավասու մարմիններին: Հետևաբար, մեկ ինքնուրույն գործողությամբ իրազեկելը, իսկ այնուհետև մեկ այլ գործողությամբ կատարման ուղարկելն այնքան էլ արդարացված չէ:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն. Նախագծի 7-րդ հոդվածի (վերահամարակալվել է որպես 8-րդ հոդված) 5-րդ մասի և 9-րդ հոդվածի (վերահամարակալվել է որպես 10-րդ հոդված) պահանջների միասնականացման խնդիր առկա չէ: Այսպես, Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ Վարչապետը ծանուցումն ուղարկում է ներման խնդրագիր ներկայացրած անձին, նախարարություն, իսկ Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն: Այս կարգավորման ուժով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ծանուցումն ուղարկվում է ներման խնդրագիր ներկայացրած անձին՝ նրան իրազեկելու նպատակով,</li> <li>2) ծանուցումն ուղարկվում է ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարություններ՝ կատարման նպատակով: Իսկ 10-րդ հոդվածով պարզապես հստակեցվում</li> </ol>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>

				են, թե պատժի որ տեսակի դեպքում պատիժ կատարող որ մարմինը պետք է ապահովի հրամանագրի կամ ծանուցման պահանջների կատարումը:	
		9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Չնայած այն հանգամանքին, որ ոլորտը կարագավորող իրավական ակտերով (<< պաշտպանության նախարարի հրաման) այլևս կարգապահական գումարտակ գոյություն չունի, բայց մյուս կողմից քրեական օրենսգրքով ուժը կորցրած չի ճանաչվել կարգապահական գումարտակում պահելը որպես պատժի տեսակ, ուստի առաջարկվում է քննարկել նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված <b>«կամ կարգապահական գումարտակում պահելու»</b> բառերը հանելու նպատակահարմարության հարցը:	Առաջարկությունը չի ընդունվել. հաշվի առնելով այն հանգամանքը, որ << քրեական օրենսգրքում կարգապահական գումարտակում պահելը շարունակվում է դիտարկվել որպես պատժի տեսակ, նշված կետում անդրադարձ է կատարվել նաև պատժի խնդրո առարկա տեսակին:	Չի ընդունվել:
4.	<b>«ԵԼՔ» խմբակցություն</b>	1. «Ներման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  1) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	1) Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «խրախուսական գործընթաց» բառերը փոխարինել «մարդասիրական ակտ» բառերով, իսկ կետը «կամ պատժաչափով» բառերից հետո լրացնել «, կամ կարող է վերացվել դատվածությունը» բառերը: Ներումը դա հումանիստական՝ մարդասիրական ակտ է և ոչ խրախուսական: Խրախուսական գործընթացը դա վաղաժամկետ	1) Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ներման շնորհում» հասկացությունը փոխարինվել է «ներում» հասկացությամբ և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «1) <b>ներում</b> ՝ մարդասիրական դրսևորում, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը սույն օրենքով սահմանված դեպքերում և	1) Ընդունվել է մասնակի:

			<p>ազատումն է, որը պետք է լինի նաև կանխատեսելի, իսկ ներման դեպքում հայեցողությունը շատ մեծ է: Եթե մենք դիտարկում ենք պատասխանատվությունից և պատժից ազատելու այս երկու ինստիտուտները, ապա տեսնում ենք, որ դրանք էապես տարբերվում են միմյանցից, պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում դա խրախուսական գործընթաց է և պետք է լինի կանխատեսելի, սպասելի, իսկ ներման դեպքում դա հայեցողական է՝ մարդասիրական ակտ: Ուստի գտնում ենք, որ «խրախուսական գործընթաց» բառերը պետք է փոխարինել «մարդասիրական ակտ» բառերով: Մյուս առաջարկվող փոփոխությունը «, կամ կարող է վերացվել դատվածությունը» լրացումն է: Քանի որ ներումը դա մարդասիրական ակտ է, ապա տրամաբանական է, որ այն պետք է տարածվի նաև դատվածությունը հանելու վրա: Դատվածությունը մարդուն վատ իրավական դրության մեջ դնող երևույթ է հետևաբար մարդը իրավունք ունի խնդրելու ներել՝ վերացնել իր դատվածությունը, որպեսզի հետագայում կարողանա որոշակի պաշտոններ զբաղեցնել և այլն: Ինչպես ներման ցանկացած խնդրանք, այնպես էլ դատվածությունը ներելու խնդրանքը ինքնին պարտավորեցնող չի և հայեցողաբար կարող է մերժվել:</p>	<p>կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով.»: Ինչ վերաբերում է դատվածությունը վերացնելը որպես ներման դրսևորում նախատեսելուն, ապա հարկ է նշել հետևյալը. Ներման ծավալի մեջ դատվածության վերացումը չի կարող մտնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանով դատվածության փաստն իրավաբանորեն առջինն է դառնում: Հակառակ դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հետագայում նոր հանցագործություն կատարելու պարագայում ներման արժանացած և ներման չարժանացած դատապարտյալները հայտնվում են անհավասար պայմաններում: Բացի այդ, Սահմանադրության 70-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ներման ինստիտուտը չի տարածվում դատվածության վրա, քանի որ Սահմանադրությունն օգտագործում է «դատապարտյալ» եզրույթը, իսկ եթե անձն ունի դատվածություն, ապա նա այլևս դատապարտյալ չէ, քանի որ պատիժը կրելուց հետո անձը չի կարող ունենալ դատապարտյալի կարգավիճակ: Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Նախագծի որդեգրած մոտեցումը կիսում են նաև տեսաբանները. տեսական գրականության մեջ առկա է կարծիք առ</p>	
--	--	--	--	---	--

		<p>2) 5-րդ հոդված 1-ին մաս</p>	<p>2) Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «Սպանության և խոշտանգման համար դատապարտվածների ներման խնդրագրերը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Արդարադատության նախարարությունը ներման խնդրագիրը պատշաճ ձևով ուղարկում է տուժողին կամ տուժողի իրավահաջորդին՝ ներման վերաբերյալ նրանց դիրքորոշումն ստանալու նպատակով: Ներման խնդրագրի ստացման օրվանից երկշաբաթյա ժամկետում պատասխանը ստացվելու դեպքում, այն ներառվում է սույն</p>	<p>այն, որ խնդրո առարկա դրսևորումը դատական իշխանության հետ փոխհարաբերությունների տեսակետից սահմանադրականության առումով խնդրահարույց է (տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի խմբագրությամբ, Եր.: Իրավունք, 2010): Ասվածը կարելի դիտարկել երեք առումով.</p> <p>1) դատվածությունը հանելու կամ մարելու համար օրենսդիրը նախատեսել է այլ ռեժիմ.</p> <p>2) դատվածությունը հանդիսանում է մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ.</p> <p>3) դատվածությունը պատժի ընդհանուր հասկացության մեջ չի մտնում:</p> <p>2) Առաջարկությունն ընդունվել է մասնակի:</p> <p>Հաշվի առնելով խոշտանգման դեպքում ներում շնորհելու արգելքի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն պրակտիկան՝ Նախագծում ամրագրվել է, որ <b>ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:</b></p> <p>Տուժողի կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.</p> <p>Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի</p>	<p>2) Ընդունվել է մասնակի:</p>
--	--	--------------------------------	---	--	--------------------------------

			<p>հողվածի 3-րդ մասով սահմանված կարգով կազմված անձնական գործում:»:</p> <p>Խոշտանգումների բացարձակ արգելքի սկզբունքը միջազգայնորեն ընդունված է, որը դրսևորվում է նաև հետևյալ ձևով՝ պատշաճ պատիժ նշանակված և ստացող անձը եթե ներվում է, ապա դա վերականգնում է խոշտանգման զոհի կարգավիճակը և եթե մենք այս առաջարկով մասնակից ենք դարձնում խոշտանգման զոհին այս վարույթին և ինքը ներում է, ապա այլևս չի ստանում զոհի կարգավիճակ:</p> <p>Մենք ունենք Սահմանադրական դատարանի որոշումներ (26.12.2000թ. ՍԴՈ-271, 22.02.2002թ. ՍԴՈ-350), որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (այսուհետ կոնվենցիա) կլանված է Սահմանադրությամբ և եթե որևէ բան հակասում է Կոնվենցիային չի կարող չհակասել Սահմանադրությանը:</p> <p>Գտնում ենք, որ տուժողը՝ զոհը պետք է ներգրավված լինի այս ընթացակարգի մեջ, եթե նա դժգոհ է, ապա կվերականգնվի զոհի կարգավիճակը և նրա Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքը, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը կխախտվի և անձն այդ պահից սկսած կարող է զանգատ ներկայացնել Եվրոպական դատարան, որպեսզի ձանաչվի նրա իրավունքի խախտումը:</p>	<p>հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրի (ընդունվել է 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով) 4-րդ կետում սահմանվել է, որ <b>զոհերը ազգային օրենսդրության համապատասխան պետք է ունենան արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն</b>: Նույն հռչակագրի 6-րդ կետը <b>պարտավորեցնում է աջակցել զոհերին, որպեսզի դատական (...) ընթացակարգերը մեծամասամբ համապատասխանեն նրանց պահանջմունքներին</b> հետևյալ միջոցներով.</p> <p>1) զոհերին <b>տեղեկություն տալ</b> իրենց դերի և <b>դատական քննարկումների անցկացման ժամկետի, ծավալի և ընթացքի</b>, նրանց գործերի քննության արդյունքների մասին, հատկապես ծանր հանցագործությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ նրանք այդպիսի տեղեկություն են պահանջել.</p> <p>2) այն դեպքերում, երբ <b>շոշափվում են զոհերի անձնական շահերը, դատաքննության համապատասխան փուլերում ապահովել նրանց կարծիքի (...) ներկայացումն ու քննարկումը (...)</b>:</p> <p>Տուժողի իրավունքների վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է արտացոլվել նաև Եվրոպայի նախարարների Կոմիտեի 1985 թվականի № R(85) 11 «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» հանձնարարականում, որը կոչ է անում պետություններին մեծ ուշադրություն</p>	
--	--	--	--	--	--

				<p>հատկացնել տուժողի կարիքներին քրեական դատավարության բոլոր փուլերում, <b>վերանայել գործող օրենսդրության և պրակտիկայի կիրառումը՝ հաշվի առնելով տուժողի շահերն ու պահանջները</b> (տե՛ս նախաբան, կետ 13):</p> <p>«Հանցագործությունից տուժած անձանց տրամադրվող աջակցության վերաբերյալ» Rec (2006) 8 հանձնարարականի համաձայն՝ քրեական արդարադատության մարմինները, տուժողի կարիքներից ելնելով, <b>պետք է երաշխավորեն տուժողին տեղեկատվության մատչելիությունը</b>, որն անհրաժեշտ է քրեական դատավարության տարբեր փուլերում իր իրավունքների իրացման և շահերի պաշտպանության համար (տե՛ս 4.2 կետ):</p> <p>Վերոնշյալ բոլոր կետերի համալիր վերլուծությունից հետևում է, որ միջազգային կազմակերպությունները առաջարկում են տուժողին մասնակից դարձնել <b>քրեական դատավարության բոլոր փուլերին (նմանատիպ մոտեցում է որդեգրվել նաև օրենսդրական բարեփոխումների արդյունքում վերանայված՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի վերանայման շրջանակներում)</b>: Այս համատեքստում անդրադառնալով ներման խնդրանքի իրավունքին՝ հարկ է նկատի ունենալ, որ՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներման խնդրանքի իրավունքը ծագում է այն պարագայում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ.</li> <li>2) ներում շնորհվում է ոչ թե դատական կարգով, այլ Հանրապետության</li> </ol>
--	--	--	--	--

			<p>3) Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում «ներման խնդրագիրը» բառերից հետո լրացնել «ներման խնդրագրի վերաբերյալ տուժողի կամ տուժողի իրավահաջորդի դիրքորոշումը՝ դրա առկայության դեպքում,» բառերը:</p> <p>4) Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ</p>	<p>նախագահի կողմից.  3) ներում շնորհելու դեպքում անձը չի ազատվում նյութական վնասի հատուցման պարտականությունից: Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ <b>խնդրո առարկա ինստիտուտի դեպքում տուժողին լսելը պարտադիր հանգամանք չի հանդիսանում:</b></p> <p>3) Առաջարկությունը չի ընդունվել. տե՛ս նախորդ կետը:</p> <p>4) Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Սահմանադրության 135-րդ հոդվածին համահունչ՝ Նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ հոդվածով.  <b>«Հոդված 7. Ներում շնորհելու դեպքերը</b>  1. Հանցագործության համար դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա ներկայացրել է ներման խնդրագիր:  2. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը կամ ազատազրկման ոչ պակաս, քան կեսը:</p>	
--	--	--	---	--	--



		<p>3) 5-րդ հոդված 3-րդ մաս</p> <p>4) Նախագիծ</p>	<p>հոդվածով. «Հոդված 7 Ներում շնորհելու պայմանները</p> <p>1. Ներում կարող է շնորհվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝</p> <p>1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը. 2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը. 3) առանձնապես ծանր հանցագործության, բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը. 4) Ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, ահաբեկչության, պատանդ վերցնելու, օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փախցնելու կամ զավթելու, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելու, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր</p>	<p>3. Ցմահ ազատագրկման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատագրկման ոչ պակաս, քան քսան տարին:</p> <p>4. Ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:»:</p> <p>Միաժամանակ հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ ներման և պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտներն ամբողջությամբ նույնացվել չեն կարող. բավական է միայն նշել, որ առաջինը մարդասիրական դրսևորում է, իսկ երկրորդը՝ խրախուսական:</p>	<p>3) Չի ընդունվել</p> <p>4) Ընդունվել է մասնակի:</p>
--	--	--	--	---	---

		5) 7-րդ հոդված	<p>հավիշտակելու կամ շորթելու, ազրեսիվ պատերազմի, պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելու, ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ, միջազգային ահաբեկչության, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումների գինված ընդհարումների ժամանակ, անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը գինված ընդհարման ժամանակ, ինչպես նաև բանդիտիզմի, պետական դավաճանության, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության, մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, էկոցիդի, ցեղասպանության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը.</p> <p>5) ցմահ ազատազրկման դեպքում՝ ազատազրկման ոչ պակաս, քան տասնհինգ տարին:</p> <p>1. Ազատազրկման և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել:</p> <p>2. Բացառիկ դեպքերում Նախագահը կարող է ներում շնորհել առանց սույն հոդվածի 1-ին մասի սահմանափակումների:»:</p> <p>5) Նախագծի 7-րդ հոդվածում ավելացնել նոր առաջին մաս հետևյալ բովանդակությամբ՝</p>	5) Առաջարկությունը չի ընդունվել. Սահմանադրության 135-րդ հոդվածն արդեն իսկ ամրագրում է, որ	
--	--	----------------	---	---	--

		<p>2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված</p>	<p>«1. Ներումը շնորհում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ Հայաստանի Հանրապետության անունից:»:</p> <p>Նախագծի 7-րդ հոդվածի մյուս կետերի համարակալումը համապատասխանաբար փոխել:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածում «ավելի մեղմ պատժատեսակով» բառերից հետո լրացնել «կամ պատժաչափով» բառերը:»:</p>	<p>Հանրապետության նախագահին օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը, ուստի, գտնում ենք, որ Նախագծում առաջարկվող մասը լրացնելը որևէ բեռ չունի:</p> <p>2. Առաջարկությունը չի ընդունվել. ներման ծավալի մեջ դատվածության վերացումը չի կարող մտնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանով դատվածության փաստն իրավաբանորեն առջին է դառնում: Հակառակ դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հետագայում նոր հանցագործություն կատարելու պարագայում ներման արժանացած և ներման չարժանացած դատապարտյալները հայտնվում են անհավասար պայմաններում: Բացի այդ, Սահմանադրության 70-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ներման ինստիտուտը չի տարածվում դատվածության վրա, քանի որ Սահմանադրությունն օգտագործում է «դատապարտյալ» եզրույթը, իսկ եթե անձն ունի դատվածություն, ապա նա այլևս դատապարտյալ չէ, քանի որ պատիժը կրելուց հետո անձը չի կարող ունենալ դատապարտյալի կարգավիճակ: Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Նախագծի որդեգրած մոտեցումը կիսում են նաև տեսաբանները. տեսական գրականության մեջ առկա է կարծիք առ այն, որ խնդրո առարկա դրսևորումը դատական իշխանության հետ փոխհարաբերությունների տեսակետից սահմանադրականության առումով</p>	<p>5) Չի ընդունվել</p>
--	--	---	---	--	------------------------

				<p>խնդրահարույց է (տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի խմբագրությամբ, Եր.: Իրավունք, 2010): Ասվածը կարելի դիտարկել երեք առումով.</p> <p>1) դատվածությունը հանելու կամ մարելու համար օրենսդիրը նախատեսել է այլ ռեժիմ.</p> <p>2) դատվածությունը հանդիսանում է մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ.</p> <p>3) դատվածությունը պատժի ընդհանուր հասկացության մեջ չի մտնում:</p>	<p>2. Չի ընդունվել</p>
--	--	--	--	--	------------------------